ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

1 դեկտեմբերի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

172
(2838)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՎԻԱՓՈԽԱԴՐՈՂԸ ԿԴԱԴԱՐԵՑՆԻ ԹՌԻՉՔՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ դեկտեմբերի 2-ից 4-ն ընկած ժամանակահատվածում որոշում է կայացվելու, որ Fly Arna ավիափոխադրող ընկերությունն այլեւս Հայաստանից չվերթներ չի իրականացնելու: Մեր տեղեկություններով՝ շատ լուրջ խնդիր կա՝ ընկերության կազմակերպչական եւ ֆինանսական հարցերի հետ կապված: Մեր աղբյուրները փոխանցում են, որ այս ավիափոխադրողը երբ եկել է դաշտ եւ գործունեություն է սկսել ծավալել, այդ ժամանակահատվածում FLy Arna ընկերության տնօրենն էր Դավիթ Փափազյանը: Նա տարբեր մարդկանց աշխատանքի է տեղավորել, առանց համապատասխան մասնագիտացման՝ նրանց տալով լուրջ պաշտոններ եւ բարձր աշխատավարձեր: Այս ընկերությունը պետական ֆինանսական միջոցներ է ստացել, ինչի համար կառույցը ստուգել է Պետական վերահսկողական ծառայությունը. բոլոր փաստաթղթերն ու ակնհայտ խախտումները տարել ներկայացրել են վարչապետ Նիկոլ Փաշինյանին: Հենց սրա պատճառով էլ լուրջ տարաձայնություններ են առաջացել, եւ Փաշինյանը որոշում է կայացրել՝ ավելի լավ կլինի՝ այս ընկերությունը չվերթ չիրականացնի: Այս ընկերության ձախողումը կապվում է նաեւ Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի հետ, քանի որ նա միջնորդ է եղել, որ այս ընկերությունը թռիչքներ իրականացնի Հայաստանում: Այս հարցը շատ թեժ է քննարկվում ԱԺ ՔՊ-ական պատգամավորների միջեւ, եւ բոլորը մեղավորներ են փնտրում: Հավելենք նաեւ, որ ընկերությունը 2021 թվականի դեկտեմբերի 10-ին պետական գրանցում է ստացել «Հայկական ազգային ավիաուղիներ» ՓԲԸ-ից եւ ներկայանում է «Ֆլայ Արնա» ապրանքանիշով: Համաձայն պետռեգիստրի՝ ավիաընկերությունն ունի 3 բաժնետեր, բայց ներկայանում է որպես ազգային փոխադրող:



4-օրյա պատերազմի հանգամանքները քննող ԱԺ հանձնաժողովը դեկտեմբերի 3-ին կավարտի իր աշխատանքը: Աշխատանքների ավարտից հետո հանձնաժողովը պետք է ամփոփիչ զեկույց հրապարակի՝ ներկայացնելով իր եզրակացությունը եւ պատերազմի հանգամանքների ուսումնասիրության արդյունքները: «ԱԺ կանոնակարգ» օրենքի 25-րդ հոդվածը սահմանում է՝ քննիչ հանձնաժողովն իր գործունեության արդյունքով Ազգային ժողովի նախագահին ներկայացնում է զեկույց, որը ներառում է հանձնաժողովի ստեղծման համար հիմք հանդիսացած հարցի վերաբերյալ պարզված փաստերը, ինչպես նաեւ դրանց առնչությամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ հանձնաժողովի եզրահանգումները: Զեկույցին կցվում են դրանում նշված փաստերը եւ եզրահանգումները հիմնավորող փաստաթղթեր կամ այլ նյութեր: Քննիչ հանձնաժողովը պատրաստի ամբողջական զեկույցը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին, որը ներառում է հանձնաժողովի ստեղծման համար հիմք հանդիսացած հարցի վերաբերյալ պարզված փաստերը, ինչպես նաեւ դրանց առնչությամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ հանձնաժողովի եզրահանգումները: Զեկույցը կարող է ունենալ բաց եւ փակ մասեր: Ազգային ժողովի նախագահին ներկայացվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, զեկույցը բաց քննարկվում է Ազգային ժողովի հերթական նիստում, հրապարակվում է նաեւ ԱԺ կայքում, իսկ փակ մասը քննարկվում է գաղտնի ռեժիմով. փակ մասին կարող են ծանոթանալ այն պատգամավորները, որոնք գաղտնի ռեժիմի նյութերին ծանոթանալու թույլտվություն ունեն: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ԱԺ ՔՊ-ական պատգամավոր Քրիստինե Պողոսյանը, որը նաեւ քննիչ հանձնաժողովի անդամ է հանդիսանում, ասաց, որ հանձնաժողովը վերջնական զեկույցը կներկայացնի լիազորությունների ավարտից 2 ամիս անց: Ստացվում է՝ փետրվարին արդեն ԱԺ քննիչ հանձնաժողովը պետք է զեկույց ներկայացնի: Հասկանալի է, որ նրանք նպատակ ունեն Նիկոլ Փաշինյանին մաքրագրել պատերազմի աններելի մեղքերից, միայն դրա համար է Անդրանիկ Քոչարյանը շոուներ բեմադրում:



Դեկտեմբերի 5-ին մեկնարկում է Ազգային ժողովի հերթական նստաշրջանը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նիստերի օրակարգում 24 հարց է ընդգրկված, որոնցից պարտադիր քննարկման ենթակա են 12-ը: Այդ պարտադիր հարցերից է նաեւ Հաշվեքննիչ պալատի անդամի, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի եւ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամի ընտրությունը: «Պատիվ ունեմ» եւ «Հայաստան» խմբակցությունները միասին առաջադրել են Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամի թեկնածու: Թեկնածուն Մանվել Բաղալյանն է, որը Քաղծառայության խորհրդի նախկին նախագահն է, պրոֆեսիոնալ է, Կառավարման ակադեմիայի դասախոս: Որպես Հաշվեքննիչ պալատի անդամի թեկնածու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից առաջադրված է Հակոբ Միհրանյանը: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի համար երկու թեկնածու է առաջադրված՝ Նարինե Ավետիսյանն ու Հայկուհի Հարությունյանը: Վերջինս այժմ այդ կառույցի նախագահն է, մյուսը՝ նրա աշխատակիցը: Հավելենք, որ սա ԱԺ-ի վերջին նստաշրջանն է, սակայն մինչեւ տարեվերջ թերեւս արտահերթ նստաշրջաններ կլինեն:

⇨ էջ 2

ՀՀ կառավարությունում նոր սեռի կարդինալ է հայտնվել, որն արդեն հասցրել է խանդի տեսարանների առիթ դառնալ: Խոսքը ՀՀ փոխվարչապետ Միհեր Գրիգորյանի մասին է: «Ժողովուրդ» օրաթերթին կառավարական կաբինետից դժգոհություններ են փոխանցվել առ այն, որ փոխվարչապետը Նիկոլ Փաշինյանին զեկուցում է հարցերն ու երեւույթներն այնպես, ինչպես իրեն է հարմար, որպեսզի իր մտերիմները մաքսիմալ օգուտ քաղեն պատեհ իրավիճակից: Հայաստանի գրեթե բոլոր խոշոր բիզնեսների հետ Գրիգորյանն այս կամ այն կերպ առնչվում է վերահսկողական տեսանկյունից՝ շինարարական մեծ ծրագրեր, «Վիվասել» ընկերության առեղծվածային վաճառքը նոր՝ արդեն աղմկահարույց սեփականատերերին, «Հայփոստի» շենքի վաճառքը, «Ռենշին» խոշոր կառուցապատող ընկերությունը, HSBC-ի վաճառքն ու միավորումը «Արդշինինվեստբանկ»-ին, որտեղ ինքը տարիներ շարունակ տնօրեն է եղել: Կարճ ասած, մեծ ծրագրերը, որտեղ կան մեծ ֆինանսական հարցեր եւ շահույթ, Միհեր Գրիգորյանի վերահսկողության տակ են: Երիտպաշտոնյաները սկսել են խանդի տեսարաններ նրա շուրջ:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆՆ ՈՒ ԱՂՄԿԱՀԱՐՈՒՅՑ ՆԱԽԱԳԻԾԸ

ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Հայկ Սարգսյանը շրջանառության մեջ էր դրել օրենքի նախագիծ, որը հնարավորություն է տալիս 27 տարին լրացած, սակայն պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիներին ազատվել գործող օրենսդրությամբ սահմանված քրեական պատասխանատվությունից: Ըստ ՔՊ պատգամավորի հեղինակած նախագծի՝ այդ անձինք հնարավորություն կունենան զինվորական ծառայության չանցնելու կամ կրճատված ժամկետով ծառայության ՀՀ պետական բյուջե համապատասխան գումարներ վճարելու միջոցով: Նախագիծը շրջանառության մեջ դնելուց հետո թեժ քննարկումներ սկսվեցին թե՛ հանրության շրջանում, թե՛ հենց իշխանության ներսում: Ըստ շրջանառվող տեղեկությունների՝ Հայկ Սարգսյանի աղմկահարույց նախագիծը կրճատ է բորբոքել նաեւ ՔՊ-ի ներսում, եւ անգամ Սարգսյանի թիմակիցներից շատերը դեմ են նախագծին: Այս առիթով «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է պատգամավորի հետ:

-Պարոն Սարգսյան, ինչո՞ւ Ձեր նախագիծը այսքան աղմուկ բարձրացրեց, անգամ Ձեր թիմակիցներն են քննադատում նախագիծը:

-Որեւէ քննադատություն չկա, ինձ որեւէ մեկը բացասական բան չի ասել նախագծի վերաբերյալ:

-Տեղեկություններ կան, որ քննարկումների ժամանակ հենց Ձեր թիմակիցները բացասական են արտահայտվել նախագծի մասին, անգամ մտադիր են այն ԱԺ-ում չանցկացնել:

-Ինքը դրական օրենք է եւ շատ կարեւոր, որեւէ բացասական միտք չի կարող ունենալ, կարող է՝ ինչ-որ մեկը խոսակցության ընթացքում մի բան ասել է, բայց անձամբ ինձ ոչ մեկը բացասական բան չի ասել քննարկումների ժամանակ: Եթե լինեն առողջ քննարկման առաջարկներ, այլ կարծիքներ հնչեն, ես պատրաստ եմ այդ հարցը քննարկել՝ ի շահ մեր պետության:

-Ե՞րբ է նախագիծը մտնելու ԱԺ նիստերի օրակարգ:

-Կառավարությունը քննարկել է, դրական երակացություն է տվել, հուսով եմ՝ կհասցնեն մինչեւ ամսի 4-ը կառավարությունից ուղարկել ԱԺ, եւ կներառվի քառօրյա նիստերի օրակարգ:

-Վստա՞հ եք, որ երբ գա ԱԺ, կողմ են քվեարկելու եւ ընդունելու են Ձեր հեղինակած նախագիծը:

-Այո, թե՛ հանձնաժողովում է դրական եզրակացություն ստանալու, թե՛ ԱԺ-ում:

Ի դեպ, ԱԺ պաշտոնական կայքէջից տեղեկացանք, որ Հայկ Սարգսյանի հեղինակած նախագիծը հաջորդ շաբաթ մեկնարկելիք ԱԺ նստաշրջանի օրակարգում ներառված չէ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԿՔՆՆԱՐԿՎԻ

ՄՊՐ ԹԵԿՆԱԾՈՒ ԵՆ ԱՌԱՋԱԴՐԵԼ

Հաջորդ շաբաթ մեկնարկելիք ԱԺ նիստերի օրակարգում, ի թիվս այլ հարցերի, Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամի ընտրության հարցն է:

Ընդդիմադիր «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցություններն այս պաշտոնում առաջադրել են ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախկին նախագահ Մանվել Բաղալյանի թեկնածությունը:

Նրա թեկնածությունն ԱԺ-ում կներկայացնի «Հայաստան» խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանը:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր. ««Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ընդդիմադիր «Հայաստան» եվ «Պատիվ ունեմ» խմբակցությունները Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամի թեկնածու են պատրաստվում առաջադրել ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախկին նախագահ Մանվել Բաղալյանին:

Նախորդ անգամ՝ սեպտեմբերի 12-ին, իշխող մեծամասնությունը տապալեց ընդդիմության թեկնածուի ընտրությունը. 107 պատգամավորից քվեարկությանը մասնակցել էին ընդդիմադիր 33 պատգամավորներ, իսկ իշխող ֆրակցիայի պատգամավորները, առհասարակ, չէին եկել քվեարկության, ինչի պատճառով Անահիտ Սարգսյանի թեկնածությունը խորհրդարանը չէր հաստատել:

Մեր տեղեկություններով՝ ընդդիմադիր խմբակցությունները որոշել են կրկին փորձել ու այդ պաշտոնում նոր թեկնածու առաջադրել: Թեկնածուի առաջադրման ժամկետը մինչեւ ամսի 12-ն է, ընդդիմադիրները վաղը կներկայացնեն նրա թեկնածությունը ԱԺ, իսկ ԱԺ առաջիկա նիստին արդեն կքննարկվի Մանվել Բաղալյանի թեկնածության հարցը:

Թե ինչու կանգ առան հենց Մանվել Բաղալյանի թեկնածության վրա՝ հաշվի առնելով, որ ՔՊ-ն նախորդ անգամ տապալեց ընդդիմության թեկնածուի ընտրությունը, հիմա ինչ ակնկալիքով են նոր թեկնածու առաջադրում, «Հայաստան» խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանն ասաց. «Սահմանադրությամբ եւ օրենքով սահմանված մեր լիազորությունն է ներկայացնել թեկնածու, մենք ներկայացնում ենք արժանապատիվ, իսկ թե ինչ կանի իշխանությունը, չեմ կարող ասել: Մյուս բոլոր հարցերի պատասխաններն արդեն ԱԺ նիստին կհնչեն»»:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԹԱՆԿԱՐԺԵՔ ԴՐՈՇՆԵՐԸ

Երեւանի քաղաքապետարանը 2023 թվականին 992 հազար դրամի արժողությամբ դրոշների գնման համար պայմանագիր է կնքել «ԱՄՈՒՐ ԳՍՄ» ՍՊԸ-ի եւ «Մարգարիտ Արծրունյան» անհատ ձեռներեցի հետ, 2 մլն 970 հազար դրամ արժողությամբ էլ դրոշակազարդման ծառայությունների պայմանագիր է կնքել «ԷՄ-ԷՄ Գրուպ» ՍՊԸ-ի հետ: Երեւան քաղաքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին առաջարկվող նախագծում «Դրոշների տեղադրում» ծրագրով նախատեսվել է 32 մլն դրամ, ինչը ներառում է ինչպես հատուկ օրերին քաղաքի դրոշակազարդման աշխատանքները, այնպես էլ քաղաքի տարբեր հատվածներում ՀՀ դրոշների տեղադրումը, պարբերաբար փոխարինումը եւ սպասարկումը: «Փողոցների, հրապարակների եւ այգիների կահավորում» ծրագրով նախատեսվել է 593 մլն դրամ, որի մեջ ներառվում է թվով 450 հատ դրոշակահենքերի պատրաստում եւ տեղադրում: Ոչ մի քաղաքացու համար նորություն չէ, որ Երեւանում դրոշներ հայտնվում են մայիսի 28-ին, «Էրեբունի-Երեւան» տոնակատարությանը՝ հոկտեմբերի 19-ին, իսկ մեկ անգամ էլ՝ սեպտեմբերի 21-ին: Հայաստանում դրոշներ կան միայն կարեւոր նշանակություն ունեցող շինությունների ներսում կամ տանիքներին՝Կառավարություն, Ազգային ժողով, նախարարություններ, դատախազություն եւ այլ պետական կառույցներ: Տոն օրերին դրոշներ հայտնվում են շրջանաձեւ երթեւեկության հատվածներում եւ կամուրջների վրա: Նույնիսկ այս դեպքերում դրոշներ գնելու համար այսքան գումար երբեւէ չի օգտագործվել: Հիշեցնենք նաեւ, որ 2019 թվականին Փաշինյանը, մաքսատանը տեսնելով գետին գցած դրոշը, հրահանգել էր ազատել աշխատանքից ՊԵԿ աշխատակցին, բայց հիմա շատ պետական հաստատությունների վրա փողփողացող դրոշները քրքրված են:

ԿԱԼԱՆՔԸ ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ Է

Ազգային անվտանգության ծառայությունը միջնորդություն է ներկայացրել դատարան Երեւանի նախկին քաղաքապետ Ալբերտ Բազեյանի կալանավորումը երկարաձգելու համար. դատարանը, բնականաբար, բավարարել է միջնորդությունը, եւ Բազեյանը մինչեւ 2024 թվականի հունվարի 23-ը կշարունակի մնալ կալանքի տակ: Ի դեպ, մեզ հասած լուրերի համաձայն՝ նա դատարանում խիստ ծանր է տարել իր կալանքի երկարաձգման փաստը եւ հայտարարել է, որ ինքը որեւէ խմբի հետ կապ չունի եւ որեւէ բան չի կազմակերպել: Ավելին՝Ալբերտ Բազեյանը ծանր հիվանդ է, սակայն դատավոր Մարտին Արզումանյանը հաշվի չի առել այդ հանգամանքը: Հիշեցնենք, որ, ըստ ԱԱԾ-ի, «Խաչակիրներ» ռազամահայրենասիրական ՀԿ անդամները, ինչպես նաեւ Ալբերտ Բազեյանը եւ այլ անձինք, ունենալով հակահիշխանական հայացքներ, ՀՀ կառավարության անդամների եւ ղեկավարի նկատմամբ գաղափարական թշնամանք, նախնական համաձայնության գալով միմյանց հետ, պայմանավորվածություններ են ձեռք բերել իրենց մոտ պահվող զենք-զինամթերքը որպես հանցագործության գործիք օգտագործելու միջոցով կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու եղանակով եւ դրա սպառնալիքով զավթելու իշխանությունը...

Շարունակությունը՝ArmLur.am կայքում

ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ, ՔՆՆԱՐԿԵԼ

Նոյեմբերի 29-ին Սկոպյեում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել ԵՄ արտաքին գործերի ու անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բոռելի հետ:

Հանդիպմանը քննարկվել են ՀՀ-ԵՄ գործընկերության օրակարգի ընդլայնման հարցեր: Արարատ Միրզոյանը եւ Ժոզեպ Բոռելը հանգամանալից անդրադարձել են այդ ուղղությամբ առկա հեռանկարներին եւ գործադրվող ջանքերին՝ի նպաստ ՀՀ-ԵՄ առավել մերձեցման եւ քաղաքացիների համար շոշափելի արդյունքների ապահովման:

Անդրադարձ է կատարվել ԵՄ եւ ԵՄ անդամ պետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ Երեւանում եւ Բրյուսելում վերջին շրջանում կայացած արդյունավետ քննարկումներին՝ արձանագրելով ՀՀ-ԵՄ հավակնոտ օրակարգի կյանքի կոչման հարցում կողմերի ունեցած պատրաստակամությունը, իրականացվող քայլերը:

Ի շարունակություն հոկտեմբերին Գրանադայում ունեցած հանդիպման՝ՀՀ ԱԳ նախարարը եւ ԵՄ ԱԳԱՔ բարձր ներկայացուցիչը քննարկել են Հարավային Կովկասում անվտանգության հարցեր: Արարատ Միրզոյանն ընդգծել է ՀՀ տարածքային ամբողջականության եւ ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության նկատմամբ որեւէ նկրտումների զսպման, տարածաշրջանային ներառական ծրագրերի իրագործման եւ հարատեւ կայունության հաստատմանն ուղղված դիվանագիտական ջանքերի կարեւորությունը: Այս համատեքստում նախարար Միրզոյանը ներկայացրել է նաեւ ՀՀ կառավարության կողմից մշակված «Խաղաղության խաչմերուկ» ծրագիրը:

Անդրադարձ է կատարվել Լեռնային Ղարաբաղի ավելի քան 100 հազար բնակչության կարիքների եւ իրավունքների հասցեագրման ուղղությամբ իրականացվող քայլերին, այդ թվում՝ միջազգային գործընկերների կայուն ներգրավվածությամբ:

Ավելի ուշ՝նոյեմբերի 30-ին, Սկոպյեում ԵԱՀԿ նախարարական 30-րդ համաժողովի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Ֆրանսիայի ԱԳՆ Եվրոպայի հարցերով պետնախարար Լորանս Բունի հետ: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացնում են ՀՀ ԱԳՆ-ից:

Հանդիպմանը քննարկվել են երկու երկրների միջեւ քաղաքական երկխոսության օրակարգին եւ առանցքային ոլորտներում գործնական համագործակցությանն առնչվող հարցեր:

Զրուցակիցները մտքեր են փոխանակել տարածաշրջանային անվտանգության եւ կայունության հարցերի, առկա մարտահրավերների շուրջ: Անդրադարձ է կատարվել նաեւ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ իրականացվող քայլերին: Նախարար Միրզոյանն ընդգծել է, որ գործընթացն առաջ տանելու հնարավորությունն օգտագործելու նպատակով Հայաստանն անցյալ շաբաթ Ադրբեջանին է փոխանցել երկկողմ համաձայնագրի նախագծի առաջարկությունների փաթեթը:

ՀՀ ԱԳ նախարարը եւ Ֆրանսիայի պետնախարարը մտքեր են փոխանակել ՀՀ-ԵՄ գործընկերության օրակարգային հարցերի, բազմակողմ հարթակներում համագործակցության հեռանկարների շուրջ:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ՊԱՀՎԱԾ ԳԵՐԻՆԵՐՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ միջազգային իրավունքի մասնագետ Սիրանուշ Սահակյանն անհրաժեշտություն է համարել Ադրբեջանում գերիների պահման պայմանների առումով լրացուցիչ հետաքննության անցկացումը, հատկապես՝ հոգեբանական խոշտանգման մասով:

«Այս հանգամանքներն ուսումնասիրությունից դուրս են: Նշեմ, որ գերիներն այս ամբողջ ժամանակահատվածում չեն կարողացել հանդիպումներ ունենալ խոշտանգումների կանխարգելման որեւէ անկախ մեխանիզմի հետ: Այցելությունները բացառապես եղել են Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կողմից, բայց դրանք շատ դեպքերում ուշացած են. անգամ բարձրաստիճան պաշտոնյաների պարագայում մենք երկու-երեք շաբաթ անց նոր կարողացանք ունենալ առաջին այցելության վերաբերյալ տեղեկատվությունը, ինչը մարդու իրավունքների տեսանկյունից ուշացած է: Խոշտանգումները կանխարգելելու նպատակով պետք է անհապաղ ապահովվի անկախ մեխանիզմների մուտքը, իսկ անհապաղության տակ մենք հասկանում ենք ոչ ուշ, քան, օրինակ, մեկշաբաթյա ժամկետը: Այն էլ պետք է շատ արդարացված լինի»,-հավելել է նա:

Ըստ բանախոսի՝ բացառված են նաեւ անկախ փաստաբանների կողմից գործը ներկայացնելու հնարավորությունները, որոնք նույնպես կարող են խոշտանգումների կանխարգելման հարցում դերակատարում ունենալ:

Սահակյանը նշել է, որ հայրենադարձված բոլոր ռազմագերիներն ու քաղաքացիական անձինք տեղեկություններ ու ցուցմունքներ են տվել գերեվարման ընթացքում վատ վերաբերմունքի եւ խոշտանգումների վերաբերյալ:

«Ուստի, այս տվյալների համադրմամբ, մենք կարծում ենք, որ խոշտանգումները կանխող մեխանիզմներ Ադրբեջանում չկան, եւ միջազգային այցելությունների բացակայության պայմաններում այս անձինք դեռեւս շարունակական ենթարկվում են վատ վերաբերմունքի տարբեր դրսեւորումների: Կախված զարգացումներից՝ դրանք առանձին դեպքերում կարող են ունենալ խոշտանգման դրվագներ, իսկ մնացյալ պայմաններում հիմնականում անմարդկային ու նվաստացնող վերաբերմունքն է դոմինանտ»,-մանրամասնել է փորձագետը:

Այս պահին Բաքվում պաշտոնապես պահվում է 55 հայ, այդ թվում՝ քաղաքացիական գերիներ, ռազմագերիներ եւ քաղաքական հետապնդման ենթարկվող բանտարկյալներ:

«Եթե փորձեմ բաղդատել այս տվյալները, ապա մենք ունենք 6 քաղաքացիական անձ, 41 ռազմագերի եւ 8 բարձրաստիճան քաղաքական եւ զինվորական նախկին գործիչներ, որոնք համարվում են քաղբանտարկյալներ: Բայց կցանկանամ նշել, որ սա ընդամենը պաշտոնականացված գերիների թվաքանակն է»,-նշել է նա՝ հավելելով, որ, բացի այդ, Ադրբեջանը գերեվարել է առնվազն 80 ռազմագերի եւ քաղաքացիական անձինք, ինչը պաշտոնապես չի հաստատել:

Նրա ընդգծել է, որ դեռեւս 2021 թվականի գարնանից չեն արձանագրվում դեպքեր, երբ Ադրբեջանը կպաշտոնականացնի 44-օրյա պատերազմի ընթացքում գերեվարված անձանց:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿՆՇԱՆԱԿԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ

Ազգային անվտանգության ծառայության տնօրենին ու տեղակալներին կնշանակի եւ կազատի վարչապետը, այլ ոչ թե նախագահը: «Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ համապատասխան որոշումն ընդունվեց կառավարության նիստում:

«Ներկայումս գործող կարգավորումների պայմաններում ստացվում է, որ Ազգային անվտանգության ծառայության տնօրենի եւ տնօրենի տեղակալների պաշտոնները զինվորական ծառայության պաշտոններ են: Ծառայության տնօրենին պաշտոնի նշանակում եւ պաշտոնից ազատում է հանրապետության նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ:

Հաշվի առնելով այն, որ «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ծառայությունը վարչապետին ենթակա մարմին է, մինչդեռ ծառայության տնօրենը եւ տնօրենի տեղակալները, ներկայիս կարգավորումների համաձայն, պաշտոնի նշանակվում եւ պաշտոնից ազատվում են նախագահի կողմից, անհրաժեշտ է վերանայել գործող կարգավորումներն այնպես, որ նշված անձանց պաշտոնի նշանակի եւ պաշտոնից ազատի վարչապետը՝նկատի ունենալով ծառայության՝ վերջինիս ենթակա լինելը»,-նշված է նախագծի հիմնավորման մեջ:

Նախագիծը համարվել է անհետաձգելի եւ կուղարկվի Ազգային ժողով:

ՈՉ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՐ

Ամանորյա տոների կապակցությամբ 2024 թվականին ոչ աշխատանքային կլինեն հունվարի 1-ը եւ 2-ը: Հունվարի 3-ից կսկսվի աշխատանքային տարին: «Արմենպրեսսի» հարցմանն ի պատասխան՝ այս մասին հայտնեցին ՀՀ վարչապետի աշխատակազմից:

«Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» օրենքի համաձայն՝ Ամանորի տոները նշվում են դեկտեմբերի 31-ից հունվարի 2-ը ներառյալ:

Հունվարի 6-ին Սուրբ Ծնունդի եւ Հայտնության տոնն է. այդ օրը եւս կլինի ոչ աշխատանքային:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն օրեր առաջ՝ քաղաքացիների հարցերին առցանց պատասխանելու ընթացքում, շփոթմամբ նշել էր, որ 2024 թ. աշխատանքային օրերը կմեկնարկեն հունվարի 4-ից:

ԿՀԱՆԴԻՊԵՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Անկախ պետությունների համագործակցության ղեկավարների հանդիպումը նախատեսվում է անցկացնել Մոսկվայում դեկտեմբերի 18-ին՝Ռուսաստանի նախաձեռնությամբ: Այս մասին տեղեկացրել է ԱՊՀ գլխավոր քարտուղար Սերգել Լեբեդեւը. հայտնում է «ՏԱՍՍ»-ը:

«ԱՊՀ կառավարությունների ղեկավարների հանդիպումը արտահերթ է, նախաձեռնել է Ռուսաստանի Դաշնությունը: Այն կկայանա Մոսկվայում դեկտեմբերի 18-ին՝ Ռուսաստանի Դաշնության վարչապետ Միշուստինի նախաձեռնությամբ»,- ասել է նա:

ՀԵՏՔԵՐՈՎ

ԳԱԳԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԹՈՌՆ ՈՒ ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Երեւանի իրավատնտեսագիտական եւ կառավարման քոլեջում վախի մթնոլորտ է: Քոլեջի տնօրեն Ռիտա Գյուլամբարյանը հրահանգել է դասախոսներին եւ ուսանողներին ոչինչ չխոսել քոլեջի ուսանող՝ ՔՊ-ական Գագիկ Մելքոնյանի թոռան միջադեպից: Բանն այն է, որ քոլեջի տնօրեն Ռիտա Գյուլամբարյանը ընկերական, բարեկամական հարաբերությունների մեջ է ՔՊ-ական պատգամավոր Գագիկ Մելքոնյանի հետ, եւ ողջամիտ կասկածներ կան, որ այս հանգամանքով պայմանավորված՝ ուսանողների միջադեպը կկոծկվի:

«Ժողովուրդ» օրաթերթի նկարահանող խումբը Երեւանի իրավատնտեսագիտական եւ կառավարման քոլեջում էր: Հիշեցնենք, որ օրերս լուրեր տարածվեցին այն մասին, որ Երեւանի իրավատնտեսագիտական եւ կառավարման քոլեջում դանակահարություն է տեղի ունեցել պատգամավոր Գագիկ Մելքոնյանի թոռան մասնակցությամբ:

Մելքոնյանի թոռը՝ Գագիկ Մելքոնյանը, ըստ այդ աղբյուրի, դանակահարել է նույն համալսարանի մեկ այլ սանի, որի անունը, պարզեցինք, Սարիկ է: Ըստ «Ժողովուրդ» օրաթերթին հասած բացառիկ տեղեկությունների՝ միջադեպի ականատեսներ կան, որոնք կցկտուր տեղեկություններ են հայտնել իրավապահներին, որ Գագիկ Կարենի Մելքոնյանն է վնասվածքը հասցրել այդ տղային:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ հարցաքննության ժամանակ տուժած ուսանողն իրավապահներին հայտնել է, թե ծառից է ընկել: Դեպքի վայր ժամանած ոստիկանները պարզել են, որ վնասվածքը պատճառել է ուսանող Գագիկ Կարենի Մելքոնյանը՝ պատգամավոր Գագիկ Մելքոնյանի թոռը:

Գործը հասավ Քննչական կոմիտե: ՀՀ քննչական կոմիտեն նշված ուսումնական հաստատությունում անչափահասին վնասվածք հասցնելու դեպքի վերաբերյալ ոստիկանությունից նոյեմբերի 27-ի երեկոյան ստացվել է հաղորդում: Այդ առթիվ երկu նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հատկանիշներով: Վնասվածք ստացած անչափահասը ճանաչվել է տուժող, նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն:

Հանգամանքները պարզելու ուղղությամբ կատարվում է քննություն: Դեպքից անցել է գրեթե 6 օր, սակայն իրավապահ համակարգում կռիվ է ընկել, թե ինչու ժամանակին ՔՊ-ական պատգամավորի թոռանը չեն բռնել, հարցաքննել, ու մինչ իրավապահները կռվում են, հայտնել էինք, որ պայմանավորվածություն կա ՔՊ-ական պատգամավորի թոռանը տանել քննչական բաժին եւ հարցաքննել:

Հաշվի առնելով իրավապահների դանդաղկոտությունը կամ միգուցե դեպքին համապատասխան ընթացք չտալու ցանկությունը, քոլեջի տնօրեն Ռիտա Գյուլամբարյանի եւ ՔՊ-ական պատգամավոր Գագիկ Մելքոնյանի ընկերական կամ բարեկամական կապը՝ ողջամիտ կասկածներ կան, որ միգուցե քրեական գործը ծածկադմփոց անեն եւ փակեն:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ ԵՆ

ԿԵՂԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՈՒ ԹՈՇԱԿ


ГЕНЕРАЛЬНАЯ ПРОКУРАТУРА РЕСПУБЛИКИ АРЦАХ

THE PROSECUTOR GENERAL'S OFFICE OF THE REPUBLIC OF ARTSAKH

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

N 61-96

«5» սեպտեմբերի 2023թ

ԱՀ սոցիալական զարգացման և միգրացիայի նախարարության միասնական սոցիալական ծառայության գործակալության պետ պրն. Ս.Ասլանյանին

Նոր կենսաթոշակ նշանակելու կապակցությամբ ներկայացնում ենք ներքոհիշյալ անձանց տվյալները և կենսաթոշակի վճարումը իրականացնել կանխիկ եղանակով

Անուն, ազգանուն հայրանուն	Անձնագրի համարը և սերիան	Թոշակային գործի համարը	Թոշակի գումարը առ 25.09.2023թ.	Թոշակի գումարը առ 01.10.2023թ.	Հաշվի համարը
Կարեն Գեորգիի Գաբրիելյան	AU0513394	35	108190	540948	-
Լորետա Վազգենի Բարսեղյան	AU0220671	36	95771	478854	-

ԱՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

Կ.Գ.ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթին տեղեկություններ են հասել այն մասին, որ թեեւ վերջին իրադարձություններից հետեւանքով ՀՀ տեղափոխվելուց հետո Արցախի գլխավոր դատախազի պաշտոնակատար է ներկայացվում գլխավոր դատախազի տեղակալ Կարեն Գաբրիելյանը, սակայն իրականում վերջինս անցել է թոշակի:

Տեղեկության հետքերով կատարված ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ Արցախի գլխավոր դատախազի տեղակալ Կարեն Գաբրիելյանը, որը հանդիսանում էր գլխավոր դատախազի պաշտոնակատարը, ՀՀ տեղափոխվելուց հետո անցել է թոշակի: Վերջինս 2023թ. սեպտեմբերի 25-ից դատախազության թոշակառու է, մինչդեռ այդ մասին նույնիսկ դատախազության համակարգում տեղյակ չեն: Հատկանշական է, որ Կ. Գաբրիելյանի՝ թոշակի անցնելու պարագայում գլխավոր դատախազի լիազորությունները պետք է փոխանցվեին գլխավոր դատախազի՝ առավել մեծ դատախազական ստաժ ունեցող տեղակալին, մինչդեռ նման փոփոխություն տեղի չի ունեցել, Կարեն Գաբրիելյանը շարունակում է ներկայանալ որպես գլխավոր դատախազի պաշտոնակատար, իր մոտ է պահում դատախազության կնիքը, ներկայացնում դատախազությունը Հայաստանի Հանրապետությունում Արցախի ներկայացուցչությունում:

Արցախի դատախազությունում լուրեր են շրջանառվում, որ Կ. Գաբրիելյանի՝ թոշակի անցնելու գործընթացը տեղի է ունեցել հետին ամսաթվով: Դեպքը նաեւ բարոյական պարսավանքի է արժանացել, քանզի սեպտեմբերյան պատերազմից հետո, երբ Արցախի ժողովուրդը գտնվում էր ծանր կացության մեջ, դատախազության բարձրաստիճան պաշտոնյան զբաղված էր իր սոցիալական վիճակի բարելավմամբ: Արցախի համար բավականին զարմանալի է նաեւ Կ. Գաբրիելյանի թոշակի չափը. այն ամսական կազմում է ավելի քան 540.000 ՀՀ դրամ:

Կից ներկայացվում է Կ. Գաբրիելյանի՝ Արցախի սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարարությանն ուղղված գրության լուսապատճենը:

ԴԻ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Նոյեմբերի 28-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 12:10-ի սահմաններում Երեւանի 1-03 շտապօգնության «Կենտրոն» ենթակայանից ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Արաբկիրի բաժին ահազանգ է ստացվել, որ շտապօգնության 019 խումբը կանչով մեկնել է Բաղրամյան պողոտայում գտնվող ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, որտեղ հայտնաբերել են տղամարդու դի. հաղորդում է Shamshyan.com-ը:

Ոստիկաններն ու քննիչները պարզել են, որ մահացածը Արարատի մարզի բնակիչ 67-ամյա Վարդան Թ.-ն է, որը նույն օրը՝ ժամը 11:55-ի սահմաններում, Գիտությունների ազգային ակադեմիայի մեխանիկայի ինստիտուտի 2-րդ հարկում գտնվող աշխատասենյակում մահացել է: Դատաբժշկի նախնական եզրակացության համաձայն՝ արտաքին զննությամբ դիակի վրա բռնության հետքեր չեն հայտնաբերվել:

Դեպքի փաստով Արաբկիրի քննչական բաժնում «սպանություն» (հանկարծամահություն) հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Քննիչի որոշմամբ՝ նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն:

ԿԱՐԵՎՈՐ

ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Շահումյան փողոցի բնակիչները լսել են, որ շենքի բնակիչներից ամուսինները վիճաբանում են, ամուսինը դաժան ծեծի է ենթարկում կնոջը: Բնակիչները նկատել են, որ կնոջ հայրը դստերը ու թոռանը վերցրել է, ու մեքենայով փորձել են հեռանալ տնից:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ փեսան իրեն պատկանող որսորդական զենքով 4 կրակոց է արձակել մեքենայի ուղղությամբ, ինչից վնասվել է մեքենայի դուռը: Իրավապահները փնտրում են ե՛ւ զենքը, ե՛ւ զենքից կրակոց արձակողին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ դատախազը 2023 թվականի նոյեմբերի 30-ին հանրային քրեական հետապնդում է հարուցել 2018-2022 թվականներին «Երեւանի Վալերի Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) սոցիալական գիտությունների եւ սերվիսի ֆակուլտետի դեկանի պաշտոնը զբաղեցրած Ց.Ա.-ի նկատմամբ՝ դիտավորությամբ այնպիսի գործողություններ կատարելու համար, որոնք ակնհայտորեն դուրս են եկել իր լիազորությունների շրջանակից: Այդ մասին հայտնում են ՀՀ գլխավոր դատախազությունից:

Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթով պարզվել է, որ Ց.Ա.-ն, զբաղեցնելով ՊՈԱԿ-ի սոցիալական գիտությունների եւ սերվիսի ֆակուլտետի դեկանի պաշտոնը, համաձայն ՊՈԱԿ-ի կանոնադրության կարգով հանդիսանալով Փիլիսոփայության եւ պատմության, ԲՊՀ հիմնադրամի Յունեսկոյի մարդու իրավունքների, ժողովրդավարության եւ քաղաքագիտության ամբիոնների ավագ դասախոս, ՊՈԱԿ-ի ռեկտորի հրամաններով հանձնաժողովների կազմում ընդգրկված չլինելու պայմաններում դուրս է եկել իր լիազորությունների շրջանակից:

Մասնավորապես՝ 2019-2022 թվականների ընթացքում անգլերեն առարկայից անբավարար գնահատականներ ստացած ուսանողներից՝ Ռ.Ն.-ից, Հ.Ս.-ից, Մ.Ա.-ից, Մ.Ծ.-ից, Ս.Ա.-ից, Վ.Ա.-ից եւ Ն.Պ.-ից, ընդունել է «1-ին օտար լեզու (անգլերեն) 4», «Գրավոր խոսք (անգլերեն)», «Գրավոր խոսք (անգլերեն) 2», «Բանավոր խոսք (անգլերեն) 3» առարկաների լուծարային քննություններն ու նշանակել դրական՝ «60» գնահատականներ՝ քննական տեղեկագրում հանձնաժողովի անդամի փոխարեն դնելով իր ստորագրությունը:

Հանրային քրեական հետապնդումը հարուցվել է 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական լիազորություններն անցնելը) (4 դրվագ) եւ գործող Քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնատար անձի կողմից լիազորություններն անցնելը) (3 դրվագ):

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 29-ից 30-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 60 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՍՏԱՑԵԼ

Վերջերս արտառոց դեպք է տեղի ունեցել Բերդ համայնքի սահմանամերձ Վերին Կարմիրաղբյուր գյուղի միջնակարգ դպրոցում: 8-րդ դասարանում անգլերեն լեզվի գրավոր աշխատանքի ժամանակ ուսուցչուհի Ասյա Ավագյանն, առանց հիմքի, բարձր առաջադիմություն ունեցող աշակերտուհուն կասկածել է գրավոր առաջադրանքի պատասխանները արտագրելու մեջ, գրավոր աշխատանքը խլել է աղջկանից, վիրավորական արտահայտություններ թույլ տվել նրա հասցեին: Խիստ վիրավորված աշակերտուհին թողել է դասարանը, արցունքն աչքերին՝ գնացել է իրենց տուն: Այդ միջադեպը քննարկվել է դպրոցի մանկավարժական խորհրդում, որտեղ Ասյա Ավագյանը հայտնել է, թե այդ աշակերտուհին եւ իր ծնողները պետք է իրենից ծնկաչոք ներողություն խնդրեն:

Ա. Ավագյանը կամայականություններով աչքի է ընկել նաեւ դպրոցի այլ աշակերտների հետ հարաբերություններում: Տավուշի մարզի հանրակրթական դպրոցները գործում են Տավուշի մարզպետարանի անմիջական ենթակայությամբ:

Նոյեմբերի 8-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին «Ժողովուրդ» օրաթերթը հարցում էր ուղարկել՝ նրան հարցնելով, թե մարզպետարանը Վ. Կարմիրաղբյուրի դպրոցում կատարված հակամանկավարժական երեւույթների կապակցությամբ ինչ քայլեր է ձեռնարկել: Նոյեմբերի 15-ին մարզպետարանից պատասխան ենք ստացել, ուր նշված է. «Տավուշի մարզպետի աշխատակազմը քաջատեղյակ է Վերին Կարմիրաղբյուրի դպրոցում տեղի ունեցածի մասին եւ իր լիազորությունների սահմաններում ձեռնարկել է բոլոր միջոցները»:

Որպեսզի իմանանք, թե որոնք են մարզպետի նշած «բոլոր միջոցները», նոյեմբերի 22-ին նույն խնդրի վերաբերյալ տեղեկատվական նոր հարցում ենք ուղարկել մարզի ղեկավարին:

Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «Վերին Կարմիրաղբյուրի դպրոցում տեղի ունեցած միջադեպի մասին լսելուց հետո Տավուշի մարզպետի աշխատակազմը կապ է հաստատել տնօրենի, ուսուցչուհու եւ ծնողի հետ: Դպրոցում հրավիրվել է մանկավարժական խորհրդի նիստ, որտեղ քննարկվել է ուսուցչուհուն կարգապահական տույժի ենթարկելու հարցը՝ բարեվարքության կանոնները խախտելու համար, սակայն մանկավարժական խորհուրդը դեմ է քվեարկել: Տավուշի մարզպետի աշխատակազմը բանավոր նկատողություն է տվել Ա. Ավագյանին եւ տնօրենին»:

8-րդ դասարանցի աշակերտուհու մայրը՝ Գայանե Բաբայանը, «Ժողովուրդ» օրաթերթին հայտնեց, որ Տավուշի մարզպետի աշխատակազմը իր եւ իր ամուսնու հետ կապ չի հատատել, բանավոր նկատողություն կոչվածից հետո Ասյա Ավագյանը դասարանի ծնողական ժողովում վիրավորական խոսքեր է ասել ժողովին մասնակցած իր տարեց մորը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆԻՍՏ

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ՝ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ նախարարությանը կից հասարակական խորհուրդը զումարել է իր հերթական նիստը: Այն վարել է խորհրդի նախագահ, նախարար Ժաննա Անդրեասյանը:

Նիստի օրակարգում ներառված էին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների հարթակի եւ ուսանողների աջակցության ծրագրերի վերաբերյալ հարցերը:

Նախարարի խոսքով՝ նախարարությունը դիմել է ՅՈՒՆԵՍԿՕ-ին եւ նմանատիպ մանդատ ունեցող բոլոր հնարավոր միջազգային կառույցներին՝ ներկայացնելով նյութական ժառանգության, հուշարձանների ցանկերը, ինչպես նաեւ վանդալիզմի գրանցված դեպքերը:

«Այս ուղղությամբ, իհարկե, աշխատանքներ արվում են, հատկապես՝ տարբեր հարթակներում խնդրի վերաբերյալ միջազգային տեսանելիությունը բարձրացնելու ուղղությամբ, բայց կարող են լինել նաեւ այլ առաջարկներ՝ լրացուցիչ գործիքակազմի կիրառության վերաբերյալ՝ հաշվի առնելով, որ հասարակական խորհրդի կազմում կան նաեւ մշակույթի ոլորտի ներկայացուցիչներ: Կարեւորում եմ նաեւ ոչ նյութական մշակութային ժառանգության հարցը: Նույնիսկ կարող է լինել առաջարկ՝ ամբողջական փաթեթ պատրաստել Լեռնային Ղարաբաղի ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման մասով՝ հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, դրա վտանգման իրական աստիճանը եւ ոչ նյութական մշակութային ժառանգությունը հատուկ պաշտպանության տակ առնելու որոշակի միջազգային միջոցներ փնտրելը»,- նշել է Ժաննա Անդրեասյանը՝ կարեւորելով նաեւ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցների՝ տարբեր ոլորտներում մասնագիտական աշխատանքի հնարավորությունը եւ նրանց ներուժի օգտագործումը:

Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը ներկայացրել է ԼՂ-ից բռնի տեղահանված ուսանողների աջակցության ծրագրերը: Ըստ նրա՝ մինչեւ Կառավարության համապատասխան որոշումը նախարարի շրջաբերականով բուհերին հանձնարարվել է տեղահանված ուսանողներին ներգրավել կրթական ծրագրերում անգամ որեւէ փաստաթուղթ չունենալու դեպքում: Սարգիս Հայոցյանի խոսքով՝ կառավարության որոշմամբ՝ հաստատվել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ԼՂ նախնական, միջին եւ բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա եւ հեռակա ուսուցման համակարգի այն ուսանողների 2023-2024 ուստարվա 1 կիսամյակի ուսման վարձի մասնակի կամ լրիվ փոխհատուցման մասին որոշումը, որոնք սահմանված կարգով տեղափոխվել են ՀՀ պետական ուսումնական հաստատություններ: «Ներկա դրությամբ ունենք 1837 ուսանողներ, որոնք ներգրավված են պետական բուհերում տարբեր կրթական ծրագրերով: Եթե տվյալ կրթական ծրագիրը ՀՀ բուհերում չի իրականացվում, ապա նմանատիպ կրթական ծրագրերով տեղափոխության հնարավորություն է ընձեռնված»,- նշել է կոմիտեի նախագահը՝ հավելելով, որ կա ուսանողների եւս 2 խումբ, որոնք հայտնվել են խոցելի իրավիճակում. մի խումբը ՀՀ բուհերում սովորող այն ուսանողներն են, որոնք ուսման վարձի փոխհատուցում են ստացել ԼՂ-ի կողմից:

Զեկույցներից հետո հասարակական խորհրդի անդամները ներկայացված ծրագրերի վերաբերյալ մի շարք հարցեր են ուղղել, որոնք, մասնավորապես, վերաբերել են ԼՂ-ից բռնի տեղահանված աշակերտների կրթության եւ նոր չափորոշչով տպագրված դասագրքերի ապահովմանը, ուսուցիչների աշխատավարձերին եւ հավելավճարներին, ՏՄԱԿ-ի պայմաններին եւ այլն:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ՔԼՄ–ՆԵՐՆ ՈՒ ՕՐԵՆՔԸ

Արդարադատության նախարարությունը Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում նոր նախագիծ է ներկայացրել «Զանգվածային լրատվամիջոցների մասին» օրենքում եւ հարակից օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին:

Նախագծերով առաջարկվում է՝

1) «Զանգվածային լրատվության մասին» օրենքում սահմանել լրատվամիջոցների ինքնակարգավորման հասկացությունը՝ որպես լրատվամիջոցի սոցիալական պատասխանատվության բաղադրիչ, որի նպատակն է առանց պետության միջամտության ապահովել լրատվամիջոցի գործունեության որակը,

2) սահմանել լրատվամիջոցի ինքնակարգավորումը, այդ թվում՝ էթիկայի վարքականոն, ինքնակարգավորման մարմին (վարքականոնի դրույթների ապահովման մեխանիզմներ) ունենալը՝ որպես դրա կարգավիճակի գնահատման չափանիշ,

3) նոր խմբագրությամբ շարադրել «Զանգվածային լրատվության մասին» օրենքում սահմանված հիմնական հասկացությունները՝ համապատասխանեցնելով դրանք առկա միջազգային պահանջներին,

4) նախատեսել ինքնակարգավորման պարտականությունը կատարելուն խթանող կարգավորումներ, օրինակ՝ ինքնակարգավորման համակարգ ունեցող լրատվամիջոցների համար պետական/հանրային կառույցներում հավատարմագրման անվերապահ իրավունքի երաշխավորումը, ինչպես նաեւ զրպարտությունից եւ վիրավորանքից պաշտպանվելու գործերով մինչեւ դատարան դիմելը այդ մարմիններին դիմելու համար խրախուսման միջոցներ,

5) ՁԼՄ օրենքում սահմանել ինքնակարգավորման միջոցների հասկացությունը եւ դրանց ճանաչման կարգը,

6) սահմանել հիմքեր, որով հնարավոր կլինի տարբերակել եւ հանրությանը տեսանելի դարձնել օրենքին համապատասխան ճանաչված ինքնակարգավորման միջոցներ ունեցող լրատվական գործունեություն իրականացնողներին,

7) սահմանել մեխանիզմներ անցումային փուլում այդ ճանաչումը իրականացնելու եւ հետագայում ճանաչված ինքնակարգավորման միջոցների միավորման միջոցով նոր Մեդիա խորհրդի ստեղծման ուղղությամբ:

Օրենքի փոփոխությունը ներառում է փոփոխություն եւ լրացումներ նաեւ սահմանումների մեջ՝ «Լրագրող՝ լրատվական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, լրատվական գործունեություն իրականացնողի համար մասնագիտական գործունեության կամ պարբերական հիմունքներով տեղեկատվության հավաքման եւ տարածման գործընթացում ներգրավված անձ»:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 8 ճՏՊ. 16 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝
ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ

«Մուռմել-Արմանի» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 20.12.2023 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/0719/04/20 սնանկության գործով 04.09.2020 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված «Մուռմել-Արմանի» ՍՊԸ ստորեւ նշված շարժական գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտերով.

Լոտ 3 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷԿՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «LECITRAILER» մակնիշի, D 2440 տիպարի, 2000թ. արտադրության, 228 L 01 պետհամարանիշով, գույնը՝ սպիտակ, թափքի տեսակը՝ սառնարան, ՏՄ տեսակը՝ կիսակցորդը (նույնացման համար՝ VV1F3FA1XSN097823, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 4,256,302 ՀՀ դրամ:

Լոտ 4 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷԿՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «MAN» մակնիշի, TGA-18.430 տիպարի, 2006թ. արտադրության, 090 PP 96 պետհամարանիշով, գույնը՝ դեղին, թափքի տեսակը՝ թամբային քարշակ, ՏՄ տեսակը՝ բեռնատար ավտոմեքենան (նույնացման համար՝ WMAH13ZZ97M464106, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 4,304,672 ՀՀ դրամ:

Լոտ 5 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷԿՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «MAN» մակնիշի, TGA-18-430 տիպարի, 2005թ. արտադրության, 756 US 65 պետհամարանիշով, գույնը՝ կարմիր, թափքի տեսակը՝ թամբային քարշակ, ՏՄ տեսակը՝ բեռնատար ավտոմեքենան (նույնացման համար՝ WMAH06ZZ85M423273, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 4,065,523 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «Մուռմել-Արմանի» ՍՊԸ սնանկության գործով թիվ 2480103421570000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել ե/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս քան երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (էլ. Փոստ՝ makar@bankruptcy.am)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

Գ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերն ըստ ներկայացված հերթականության՝

- Լոռու մարզ, համայնք Վանաձոր, Վանաձոր ք., Մ. Խորենացու փողոց, 2/1 շենք, 29 հասցեում գտնվող 64,23 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 15600000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Արտաշատ, Արտաշատ ք., Իսակովի փողոց, 47ա շենք, 23 հասցեում գտնվող 77,4 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 22600000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, Հրազդան ք., Կենտրոն թաղամաս, 37 շենք, 22 հասցեում գտնվող 74,53 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 21350000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Գորիս, Գորիս ք., Գետափնյա փողոց, 2 շենք, 4 հասցեում գտնվող 28,4 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 6700000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի ք, Սանահին .Սարահարթ թաղամաս, 3/10 շենք, 56 հասցեում գտնվող 47,7 ք.մ. տարածք: Լոտի մեկնարկային գինը՝ 9100000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Աջափնյակ, Սիլիկյան թաղամաս, 5-րդ փողոց, թիվ 1/4 հասցեում գտնվող 83.47 ք.մ. բնակելի տուն եւ 0.022 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 15400000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, Ստեփանավան ք., Կամոյի փողոց, 36 հասցեում գտնվող 208,1 ք.մ. բնակելի տուն, 13,8 քմ տնտեսական մաս, 2,5 քմ /1,5 խմ/ պարիսպ եւ 0,076 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 25070000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Վեդի, Վեդի ք., Արարատյան փողոց, 87/2 հասցեում գտնվող 51,41 ք.մ. առեւտրի սրահ եւ 0,00642 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 11400000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Արարատյան 1-ին զանգված, 16 շենք, 17 հասցեում գտնվող 85,2 ք.մ. բնակարան եւ 31,8 քմ ինքնակամ կառուցված նկուղ: Լոտի մեկնարկային գինը՝ 36200000 ՀՀ դրամ:
- ք.Երեւան, Կենտրոն, Պուշկինի փողոց, 38/1 շենք, 2 հասցեում գտնվող 115,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 110100000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Սպիտակ ք., Փյունիկ թաղամաս, 18 հասցեում գտնվող 80.7 ք.մ. բնակելի տուն եւ 0.076 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 8300000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Աջափնյակ Գ-3 թաղամաս, 16ա շենք, 18 հասցեում գտնվող 78,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 37750000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Արթիկ ք., Անկախության փողոց, 29 շենք, 33 հասցեում գտնվող 69,4 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 7400000 ՀՀ դրամ:
- Վայոց ձորի մարզ, համայնք Վայք, Վայք ք., Ա. Մելիքյան փողոց, 16 հասցեում գտնվող 264,9 ք.մ. բնակելի տուն եւ 0,08 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 18200000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Չարենցավան, Չարենցավան ք., 1-ին թաղամաս, 1 շենք, 8 հասցեում գտնվող 55,8 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 11300000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Կենտրոն, Ս. Վրացյան փողոց, 71 շենք, 8 հասցեում գտնվող 75,3 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 44100000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Վ. Արտաշատ, Նար-Դոսի փողոց, 6 հասցեում գտնվող 170 ք.մ. բնակելի տուն, 19,3 քմ մառան, 19,3 քմ մառան եւ 0,1488 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 23070000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Գորիս, Գորիս ք., Վանքի տափ թաղամաս, 3 շենք, 12 հասցեում գտնվող 87,4 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 18000000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Նաիրի, Եղվարդ ք., Սաֆարյան փողոց, 5-րդ նրբանցք, 5 հասցեում գտնվող 369,5 ք.մ. բնակելի տուն, 43,68 քմ ավտոտնակ, 19,2 քմ անասնաշենք, 16,8 քմ ծածկոց, 6,48 քմ կաթսայատուն, 27,28 քմ մառան եւ 0,091 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 52400000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նուբարաշեն, Նուբարաշենի 6-րդ փողոց, 144 շենք, 18 հասցեում գտնվող 50,8 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 19000000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Չարենցավան, Չարենցավան ք., 3-րդ թաղամաս, 15 շենք, 1 հասցեում գտնվող 28,5 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 7100000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Կապան, Կապան ք., Դավիթ Բեկ թաղամաս, 6 շենք, 74 հասցեում գտնվող 64,09 ք.մ. խանութ: Լոտի մեկնարկային գինը՝ 13040000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Վ. Սարգսյան փողոց, 2-րդ թաղամաս, 7 հասցեում գտնվող 213.3 ք.մ. բնակելի տուն եւ 0,052363 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 21200000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Արարատ, Արարատ ք., Կոմիտասի փողոց, 6 շենք, 22 հասցեում գտնվող 76,1 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 17000000 ՀՀ դրամ:
- Տավուշի մարզ, համայնք Դիլիջան, քաղաք Դիլիջան, Օրջոնիկիձեի փողոց, 3-րդ նրբանցք, 16 հասցեում գտնվող 152,21 ք.մ. բնակելի տուն, 26,64 քմ անասնաշենք եւ 0,0825 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 20200000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Շահումյան փողոց, 185/14 հասցեում գտնվող 226,86 ք.մ. բնակելի տուն, 0,84 քմ /3,36 խմ/ պարիսպ եւ 0,033982 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 22100000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Աբովյան ք., Սեւանի փողոց, 2/3 շենք, 2 հասցեում գտնվող 65,9 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 17300000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Չարենցավան, Չարենցավան ք., 8-րդ թաղամաս, 12 շենք, 46 հասցեում գտնվող 74 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 11400000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Սեւան, Սեւան ք., Նաիրյան փողոց, 176 շենք, 3 հասցեում գտնվող 65,05 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 15700000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Արաբկիր, Մամիկոնյանց փողոց, 6/1 շենք, 1 հասցեում գտնվող 61,4 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 40090000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Հ. Գյուլիքեւխյան փողոց, 37 շենք, 8 հասցեում գտնվող 53,5 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 26700000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Փարաքար, Երեւանյան փողոց, 90 հասցեում գտնվող 556,4 ք.մ. բնակելի տուն եւ 0,103 հա հողամաս (հողամասում առկա են 44,5 քմ ինքնակամ շինություններ): Լոտի մեկնարկային գինը՝ 48900000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Եղվարդ, Եղվարդ ք., Հովհաննիսյան փողոց, 31 հասցեում գտնվող 75,1 ք.մ. բնակելի տուն, 40 ք.մ. անասնաշենք, 32,1 ք.մ. խարխուլ, 37 ք.մ. մառան, 14,8 ք.մ. սանհանգույց, 12,2 ք.մ. /24,4 խմ/ պարիսպ եւ 0.136 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 27400000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Արմավիր ք., Հանրապետության փողոց, 98 հասցեում գտնվող 325,2 ք.մ. բնակելի տուն, 51,5 ք.մ. ավտոտնակ, 24,4 քմ լողավազան, 4,1 ք.մ. /10,66 խմ, 24,8 գծամետր/ պարիսպ, 48,7 քմ ծածկ եւ 0.0925 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 43900000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Ապարան, Ապարան ք., Ա. Հարությունյան փողոց, 46 հասցեում գտնվող 99.39 ք.մ. բնակելի տուն, 34.47 ք.մ. անասնաշենք, 2.85 ք.մ. կաթսայատուն եւ 0.08 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 15650000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Գավառ, Գավառ ք., Ազատության 2-րդ փողոց, 2-րդ անց., 1 շենք, 12 հասցեում գտնվող 71,9 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 11800000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Տիգրան Մեծ պողոտա, 56 շենք, 3 հասցեում գտնվող 75,19 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 17600000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, Էջմիածին ք., Վազգեն Առաջինի փողոց, 3-րդ փակուղի, 55 հասցեում գտնվող 145,9 քմ բնակելի տուն, 6,1 քմ թռչնանոց, 5,9 քմ ջրավազան, 8,1 քմ սանհանգույց, 3,8 քմ կաթսայատուն, 9,2 քմ մառան, 16,7 քմ մառան, 38,2 քմ ընդհանուր մակերեսով ինքնակամ շինություններ (31,6 քմ ծածկ, 3,1 քմ ծածկ, 3,5 քմ պարիսպ) եւ 0,0951 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 41300000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Ավան, Նարեկացի թաղամաս, 31 շենք, 27 հասցեում գտնվող 82,25 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 41000000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, Էջմիածին ք., Արագածի զանգված, 17 շենք, 38 հասցեում գտնվող 88,1 քմ բնակարան եւ 4,7 քմ ինքնակամ շինություն: Լոտի մեկնարկային գինը՝ 20250000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Պ. Տիչինայի փողոց, 140/11 հասցեում գտնվող 384,4 քմ բնակելի տուն, 128,5 քմ կիսանկուղ, 16,5 քմ ավտոտնակ, 5,3 քմ ջրավազան, 3,1 քմ ջրավազան, 6,1 քմ /18,3 խմ/ պարիսպ եւ 0,084109 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 143500000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Իսահակյան փողոց, 1-ին նրբանցք, 5 շենք, 33 հասցեում գտնվող 51,5 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 12500000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Գ. Կոտովսկու փողոց, 23 հասցեում գտնվող 180,3 քմ բնակելի տուն եւ 0,03198 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 54600000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 18.12.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 15.01.2024թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական: Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը: Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ»

Գ

ԿՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԻԶՆԵՍԸ

«ՎՏԲ-Հայաստան» բանկի խորհուրդը հաստատեց Եվգենիյ Մոտովիլովին «ՎՏԲ-Հայաստան» բանկի գլխավոր տնօրենի-տնօրինության նախագահի տեղակալի պաշտոնին: Նա կվերահսկի բանկի կորպորատիվ բիզնեսի զարգացման դեպարտամենտի աշխատանքը եւ պատասխանատու կլինի միջին եւ փոքր բիզնեսի զարգացման ռազմավարության իրականացման համար:

Եվգենիյ Մոտովիլովն ավարտել է Մարիյան պետական տեխնիկական համալսարանը «Կառավարում» մասնագիտությամբ եւ Տնտեսագիտության բարձրագույն դպրոցը՝ «Ֆինանսներ եւ բանկեր» մասնագիտությամբ, ունի MBA որակավորում: 2004թ.-ից նա ղեկավար պաշտոններ է զբաղեցրել Ռուսաստանի տարբեր բանկերում, որտեղ ղեկավարել է կորպորատիվ ուղղվածությունը: «ՎՏԲ» խմբին է միացել 2013թ.-ին: 2018թ.-ին նշանակվել է «Возрождение» բանկի խորհրդի նախագահի տեղակալի պաշտոնին, իսկ 2021թ.-ին ղեկավարել է «Запсибкомбанк»-ը: 2023թ.-ի սեպտեմբերից նա նշանակվել էր «ՎՏԲ-Հայաստան» բանկի գլխավոր տնօրենի - տնօրինության նախագահի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար:

««ՎՏԲ-Հայաստան» բանկը մեծ ուշադրություն է դարձնում երկրի՝ արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվող ընկերություններին եւ ձեռնարկություններին սպասարկելուն եւ աջակցելուն: Մենք ունենք նաեւ ծրագրեր՝ ավելացնելու գործառնական եկամուտը եւ ներգրավելու հաճախորդների նոր բազա: Այս առումով Եվգենիյ Մոտովիլովի փորձը, որը երկար ժամանակ աշխատել է կորպորատիվ սեգմենտում, կօգնի մեզ հասնել մեր նպատակներին»,- նշանակումը մեկնաբանել է «ՎՏԲ-Հայաստան» բանկի գլխավոր տնօրեն - տնօրինության նախագահ Արա Ավագյանը:

«Այսօր բանկը սպասարկում է Հայաստանում ավելի քան 11 հազար կորպորատիվ հաճախորդների: Մենք միջին եւ փոքր բիզնեսի ընկերություններին առաջարկում վորման, միջոցների տեղաբաշխման, երաշխիքային պրոդուկտների եւ հաշիվների սպասարկման ամենապահանջված տեսակները: Միեւնույն ժամանակ մենք միշտ ձգտում ենք լինել շուկայում մրցունակ եւ առաջարկել համագործակցության շահավետ պայմաններ: Մենք նախատեսում ենք շարունակել ընդլայնել մեր մասնակցությունը բիզնեսի սպասարկման շուկայում եւ ներգրավել նոր գործընկերներ»,- նշել է «ՎՏԲ-Հայաստան» բանկի գլխավոր տնօրենի - տնօրինության նախագահի տեղակալ Եվգենիյ Մոտովիլովը:

Այսօր «ՎՏԲ-Հայաստան» բանի հաճախորդներին հասանելի են բանկի 53 մասնաճյուղեր, այդ թվում՝ իրավաբանական անձանց սպասարկող մասնագիտացված մասնաճյուղ, ավելի քան 190 բանկոմատներ եւ 50-ից ավելի վճարային տերմինալներ՝ ամբողջ երկրի տարածքում:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ԱՀԱՋԱՆԳ՝ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ

«2017թ.-ի նոյեմբեր ամսին Ղարաբաղի բնակիչ Արկադիա Շիրինյանը իմ եւ եղբորս նկատմամբ ֆիզիկական ու հոգեբանական բռնություն գործադրելու, խաբեության ու կեղծիքի եղանակով հափշտակել է սեփականության իրավունքով իմ ընտանիքին պատկանող ասֆալտի գործարանը, որի շուկայական արժեքը 3-4 միլիոն դոլար է: Այդ մասին 2018 թվականի հունիս ամսին հաղորդում եմ ներկայացրել իրավապահ մարմիններին, որի հիման վրա՝ շահագործման հանցակազմով հարուցվել է քրեական գործ: Այդ գործը քննվել է կոնտրոնի քննչական բաժնում, քննվել է շուրջ 5 տարի, եւ 2022թ.-ի օգոստոս ամսին քննիչ Տիգրան Վարդանյանը որոշում է կայացրել կարճելու մասին, քանի որ գտել է, որ Ա. Շիրինյանը իմ եւ եղբորս նկատմամբ շորթում չի կատարել:

Երբ գործը կարճվելուց հետո ծանոթացանք քրեական գործի նյութերին, տեսանք որ քննչական մարմինը բավարար քննություն չի կատարել, չեն պարզվել կարեւոր հանգամանքներ, եւ չեն ստուգվել իմ ներկայացրած պատճառաբանությունները:

Դրա վերաբերյալ բողոք եմ ներկայացրել կենտրոնի դատախազին, որն առանց հիմնավորումների իմ բողոքը մերժել է: Ես բողոք ներկայացրի առաջին ատյանի դատարան, եւ բողոքս բավարարվեց: Իր որոշմամբ՝ դատարանը քննչական մարմնին եւ դատախազությանը պարտավորեցրել էր լրացուցիչ նախաքննության ընթացքում կատարել այն բոլոր գործողությունները, որոնք չէին կատարվել նախորդ քննության 5 տարիների ընթացքում: Օրինակ՝ դատարանը որոշման մեջ գրել էր, որ անհրաժեշտ է նշանակել ապրանքագիտական փորձաքննություն, որպեսզի պարզվի գործարանի իրական արժեքը, քանի որ գործարանը մեզանից շորթած Ա. Շիրինյանը, իբրեւ թե, գործարանի արժեքը փոխանցել է. ընդամենը 100 հազար դոլարին համարժեք գումար, որը փոխանցելուց անմիջապես հետո իմ ձեռքից խլել է: Ինչպես նաեւ մի շարք վկաների հարցաքննություններ եւ առերեսումներ, որոնք նախկինում անտեսվել են անհիմն պատճառաբանություններով: Իմ կարծիքով՝ քննչական մարմինը եւ դատախազությունը այս գործով պաշտպանում են Ա. Շիրինյանին, քանի որ առաջին ատյանի դատարանի որոշման դեմ դատախազությունը բերեց վերաքննիչ եւ վճռաբեկ բողոքներ, որոնք մերժվեցին: 2023 թ. մարտ ամսին քրեական գործի վարույթը վերսկսվեց եւ հանձնարարվեց նույն քննիչ Տ. Վարդանյանին, իսկ հսկողությունը՝ կենտրոնի դատախազությանը: Այդ ժամանակ ես դիմումներ գրեցի գլխավոր դատախազին եւ երկու անգամ էլ՝ Երեւան քաղաքի գլխավոր դատախազին, որպեսզի առաջին հերթին հետեւողական լինեն այդ գործի նկատմամբ, ինչպես նաեւ փոխեն դատախազական հսկողությունը եւ քննչական ենթակայությունը: Առանց արձագանքի, իմ դիմումներն ուղարկվեցին կենտրոնի դատախազություն, որից ես դժգոհ եմ, իսկ այնտեղից էլ՝ այն քննիչին, որը, պաշտպանելով Շիրինյանին, իմ գործը կարճել էր:

Ստիպված քննիչ Վարդանյանին մի միջնորդություն ուղարկեցինք, որով խնդրում էինք կատարել այն գործողությունները, որը նշել էր դատարանը: Ըստ էության, քննիչը, խուսափելով կատարել այդ գործողությունները, միջնորդությունը չբավարարեց, որի պատճառով բողոք ներկայացրինք հսկող դատախազ Գ. Հարությունյանին: Այդ դատախազը դեռեւս 2023թ.-ի հուլիս ամսին բավարարեց իմ բողոքը եւ քննիչին հանձնարարեց կատարել դատարանի որոշման պահանջները: Սակայն դրանից անցել է արդեն չորս ամիս, արդյունքում դեռեւս ոչ մի գործողություն չի կատարվել: Քննիչը, շահագործված լինելով, Շիրինյանի հարցում անգործության է մատնել քննությունը: Գործը անուշադրության է մատնել դատախազությունը, քանի որ, ընդունելով հանդերձ դատարանի որոշման անհրաժեշտությունը, հետեւողական չի գտնվում գործի քննության նկատմամբ: Շուտով կլրանա այս քրեական գործի վեցերորդ տարին, սակայն ամբողջ իրավական համակարգը, իմ կարծիքով, լծվել է Շիրինյանի պաշտպանության գործին, այն Շիրինյանի, որը սպառնալով խոստանում էր փոշիացնել իմ ձեռնարկությունը, վերացնել տուն-տեղս, ընտանիքս՝ վարի տալով իմ երեխաներին, իսկ ինձ դարձնելով բոմժ, թափառական, թողնելով մի դամաշնիկով, քանի որ միշտ բարձրաձայնում էր, թե ինքը հզոր է եւ N1 զինվորը՝ նկատի ունենալով երկրի նախագահ Սերժ Սարգսյանին»:

«Ժողովուրդ» օրաթերթը պատրաստ է լսել նաեւ երկրորդ կողմի կարծիքը:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՓԱՌԱՏՈՆԸ ՄԵԿՆԱՐԿԵՑ

Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակին նվիրված միջոցառումների ծրագրով նոյեմբերի 16-ից մեկնարկել է հայ մեծանուն կոմպոզիտորի անվան 11-րդ միջազգային փառատոնը:

Մեկ ամսվա ընթացքում կկազմակերպվի սիմֆոնիկ 5 համերգ, որոնց ընթացքում կներկայանան անվանի մենակատարներ: Հերթական երեկոյի հյուրը ջութակահար Ստելլա Չենն էր: Համերգին ներկա է եղել Երեւանի քաղաքապետի տեղակալ Լեւոն Հովհաննիսյանը:

Փառատոնային ծրագիրը համեմված է խաչատրյանական շնչով: Կհնչեն Արամ Խաչատրյանի կոնցերտները, հատվածներ բալետային ու այլ ստեղծագործություններից: Փառատոնային ծրագրում ընդգրկված են նաեւ Խաչատրյանի կինոերաժշտությունն ու ունկնդրի կողմից շատ սիրված ««Սիմֆոնիկ ջազ «Խաչատրյան»» համերգը:

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավար, Շառլ Ազնավուրի ծննդյան 100-ամյակի հոբելյանական հանձնաժողովի նախագահ Արայիկ Հարությունյանի գլխավորությամբ՝ նոյեմբերի 30-ին ՀՀ կառավարությունում տեղի է ունեցել վերոնշյալ հանձնաժողովի երկրորդ նիստը:

Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է վարչապետի աշխատակազմի տարածած հաղորդագրությունից, նախորդ նիստում ներկայացված առաջարկությունների եւ դիտարկումների հիման վրա՝ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը ներկայացրել է աշխարհահռչակ շանսոնյեի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների ծրագիրը, որը նախատեսվում է իրականացնել 2024 թվականին: Ծավալված քննարկումների արդյունքում այն արժանացել է հանձնաժողովի հավանությանը:

Արայիկ Հարությունյանը հանձնարարել է բոլոր ներգրավված կառույցներին ծրագրով սահմանված ժամանակացույցին համապատասխան շարունակել նախապատրաստական աշխատանքները, հստակեցնել անելիքները, բարձրացված հարցերի շուրջ կազմակերպել քննարկումներ եւ առաջարկվող լուծումները ներկայացնել հաջորդ նիստին:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԲԱՐԵԼԱՎԵԼ Է ԴԻՐՔԵՐԸ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմը բարելավել է դիրքը ՖԻՖԱ-ի դասակարգման աղյուսակում:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ վարկանիշային նոր աղյուսակում Հայաստանի ընտրանին 93-րդն է եւ բարելավել է դիրքը 2 հորիզոնականով:

Դասակարգման աղյուսակի առաջատարն աշխարհի չեմպիոն Արգենտինան է: Երկրորդ տեղում Ֆրանսիայի ընտրանին է, իսկ լավագույն տասնյակում են նաեւ Անգլիայի, Բելգիայի, Բրազիլիայի, Նիդերլանդների, Պորտուգալիայի, Իսպանիայի, Իտալիայի, Խորվաթիայի հավաքականները:

ԿԵՐԿԱՐԱՁԳԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Իտալիայի գավաթակիր եւ սուպերգավաթակիր Միլանի «Ինտերն» ավարտում է բանակցությունները Հայաստանի հավաքականի նախկին ավագ, կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանի հետ նոր պայմանագրի վերաբերյալ: Սպասվում է, որ մինչեւ Նոր տարի կողմերը կերկարաձգեն պայմանագիրը մինչեւ 2025թ. հունիս. հաղորդում է twitter.com/NicoSchira-ն:

Հունվարի 21-ին Մխիթարյանը կնշի ծննդյան 35-ամյակը: Նրա գործող պայմանագիրն իտալացի Սիմոնե Ինձագիի գլխավորած թիմի հետ նախատեսված է մինչեւ այս մրցաշրջանի ավարտը:

ԲԵԼԻՆԳԵՄԻ ՌԵԿՈՐԴՆԵՐԸ

Մադրիդի «Ռեալի» 20-ամյա անգլիացի կիսապաշտպան Ջուդ Բելինգեմը ռեկորդ է գրանցել: Նա Չեմպիոնների լիգայի առաջին չորս խաղերից յուրաքանչյուրում գոլ խփած առաջին ֆուտբոլիստն է «Ռեալի» պատմության մեջ:

Խմբային մրցաշարի նախավերջին տուրի խաղում (4:2) Բելինգեմը գրավել էր Իտալիայի չեմպիոն «Նապոլիի» դարպասը: Բիլենգեմը մասնակցել է խմբային փուլի 5 խաղից 4-ին եւ ամեն խաղում գոլ է խփել:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաեւ ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ 2023թ. դեկտեմբերի 12-ին՝ ժամը 11:00-ին, ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի կունենան «ԳՐԻՆՀԱՈՒՋ» ՍՊԸ-ի կողմից իր սեփականությունը հանդիսացող մարզ Արարատ, համայնք Արտաշատ, գյուղ Շահումյան 6/2 հողամաս հասցեում 12 հա ջերմոցային համալիրի կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության վերաբերյալ հանրային լսումներ (հանրային քննարկում):

Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք. Երեւան, Բուզանդի 1/3 հասցեում, Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում՝ www.env.am: Հեռ.՝ 011-22-02-17:

● Դեկտեմբերի 2-ին Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնում տեղի կունենա «Փափլիկը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2500-3500 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՏՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ կազմակերպության լուծարման դեպքում ինչ ժամկետում պետք է ներկայացնել հաշվետվությունները:
Սիրան Հայրապետյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ս. Հայրապետյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16.1 հոդվածի համաձայն՝ հարկ վճարողի լուծարման դեպքում մինչեւ հաշվետու ժամանակաշրջանների ավարտը հարկային մարմին ներկայացված միջանկյալ եւ (կամ) լուծարային հաշվարկները (հայտարարագրերը, հաշվետվությունները, հաշվեկշիռները) համարվում են հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված հաշվարկներ (հայտարարագրեր, հաշվետվություններ, հաշվեկշիռներ), եթե այդ հաշվարկները (հայտարարագրերը, հաշվետվությունները, հաշվեկշիռները) ներկայացնելուց հետո՝ մինչեւ հաշվետու ժամանակաշրջանների ավարտը, հարկ վճարողը որեւէ գործարք կամ գործառնություն չի կատարել, որոնց հիման վրա առաջացած պարտավորությունների վճարման օր է համարվում դրանց ներկայացմանը հաջորդող տասներորդ աշխատանքային օրը:
ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո: Իսկ նույն օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ հարկային օրենսդրությունը բաղկացած է «Հարկերի մասին» օրենքից եւ առանձին հարկատեսակների մասին օրենքներից:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ, թե ինչով են պայմանավորված ՀՀ դրամի փոխարժեքի տատանումները:
Հայարփի Ջիլավյան (45 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ազատ լողացող փոխարժեքի ռեժիմի պայմաններում ազգային արժույթի փոխարժեքը ձեւավորվում է արժութային շուկայում առկա առաջարկի ու պահանջարկի եւ դրանց փոփոխությունների ազդեցության ներքո: Եթե արտահանման աճի կամ կապիտալի ներհոսքի հետեւանքով տվյալ ազգային արժույթի շուկայում ավելանում է արտարժույթի առաջարկը, ազգային արժույթի դիրքերն անհրաժեշտաբար ամրապնդվում են: Համապատասխանաբար ներմուծման աճը կամ կապիտալի արտահոսքը նպաստում են ազգային արժույթի դիրքերի թուլացմանը:

Փոխարժեքի փոփոխությունը կարող է լինել բավականին տեւական, երբ այն պայմանավորված է երկարաժամկետ բնույթի գործոններով, կարող է կրել սեզոնային բնույթ (երբ, օրինակ, ներմուծման ու արտահանման սեզոնները տարբեր են) եւ կարող է լինել կարճաժամկետ, երբ այն կարճաժամկետ գործոնների (օրինակ՝ կարճաժամկետ ֆինանսական ներհոսքի կամ արտահոսքի) ազդեցության արդյունք է:
ՀՀ կենտրոնական բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Արժութային շուկայում առկա առաջարկն ու պահանջարկը կարող են փոփոխվել նաեւ մի շարք այլ գործոնների ազդեցության ներքո, որոնցից են, մասնավորապես, կառավարության ծախսերը, Կենտրոնական բանկի ինտերվենցիաները, արժութային կարգավորման ոլորտում օրենսդրական փոփոխությունները, էներգակիրների գների տատանումները, բնակչության մոտ ձեւավորվող սպասումները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Stella McCartney x Veuve Clicquot համագործակցության շնորհիվ՝ խաղողի եւ խցանների թափոնները վերածվում են վեգանական պայուսակների եւ կոշիկների:
LVMH-ի հովանու ներքո այս երկու ապրանքանիշերն իրենց ջանքերն ուղղել են Vegea անունով հայտնի կաշվե այլընտրանքի մշակմանը:
Ստելլա Մաքքարթնին ներկայացրել է Vegea-ի վեց աքսեսուարներ, որոնք առաջին անգամ ցուցադրվել են 2023 թվականին՝ Փարիզի Նորաձեւության շաբաթվա ընթացքում: Աստղային հավաքածուն ներառում է երեք խորհրդանշական Frayme պայուսակ, Veuve Clicquot-ի համար նախատեսված շշերի պահարան եւ Elyse ֆիրմային սանդալների երկու տարբերակ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 - 5 + 4 + 7
Կոտայքի լեռներ	- 2 - 5 + 4 + 5
Կոտայքի նախալեռներ	- 2 - 5 + 5 + 8
Գեղարքունիք	- 2 - 6 + 3 + 6
Լոռի	- 1 + 4 +11 + 14
Տավուշ	+ 1 + 6 +13 + 16
Արագածոտնի լեռներ	- 4 - 6 + 3 + 5
Արագածոտնի նախալեռներ	- 2 - 7 + 6 + 9

Արարատ	- 2 + 1 +10 + 13
Արմավիր	0 - 3 +10 + 12
Վայոց ձորի լեռներ	0 - 5 + 2 + 5
Վայոց ձորի նախալեռներ	- 2 + 7 +10 + 13
Սյունիքի հովիտներ	+ 4 + 8 +16 + 19
Սյունիքի նախալեռներ	- 2 + 3 +11 + 15
ԼՂՀ	+ 1 + 6 + 9 + 12
Երեւան	+ 6 + 8 + 10 + 13

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **30.11.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*